ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը**

   Մխիթար Հայրապետյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ սփյուռքի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   - Կիպրոսի Հանրապետություն և Ամերիկայի Միացյալ Նախանգներ ս. թ. հուլիսի 24-ից օգոստոսի 7-ը,

4. **Հրավիրող կողմը՝**
   - Կիպրոսի Հանրապետության նախագահի հումանիտար և արտերկրում բնակվող կիպրացիների հարցերով հանձնակատար Ֆոտիս Ֆոտիու,
   - ԱՄՆ Գլենդել քաղաքի քաղաքապետ Զարեհ Սինանյան:

5. **Գործուղման նպատակը՝**
   - Հանդիպում Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսի հետ:
   - Հանդիպում Կիպրոսի Հանրապետության նախագահի հումանիտար և արտերկրում բնակվող կիպրացիների հարցերով հանձնակատար Ֆոտիս Ֆոտիու:
   - Մասնակցություն «Երիտասարդ կիպրացիների համաշխարհային համաժողովի» բացմանը:
   - Մասնակցություն Հայաստան-Կիպրոս-Հունաստան ձևաչափով սփյուռքի հարցերի շուրջ եռակողմ երրորդ հանդիպմանը:
   - Հանդիպում հայկական համայնքի հետ:

- Մասնակցություն Գլենդելի Հայ-ամերիկյան թանգարանի հիմնարկեքի արարողությանը:
- Հանդիպում հոգևոր կառույցների և համահայկական ու համայնքային կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների հետ:

6. **Քննարկման թեմաները՝**
   - Հայաստան-Կիպրոս բարեկամական հարաբերությունների ընդլայնում և ամրապնդում,
   - Հայաստան-Կիպրոս-Հունաստան եռակողմ հանդիպում և համատեղ իրականացվելիք ծրագրեր,
   - Կիպրոսի Հանրապետությունում հայ համայնքին հուզող հարցերն ու դրանց լուծումները,
   - Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդում,
   - Սփյուռքի նախարարության ծրագրերի ներկայացում,
   - հոգևոր կառույցների և համահայկական ու համայնքային կազմակերպությունների հետ համագործակցության ուղիների նախանշում:

7. **Հանդիպումները, ելույթները, հարցազրույցները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Հանդիպումներ՝

- Կիպրոսի Հանրապետության նախագահ Նիկոս Անաստասիադիս:
- Կիպրոսի Հանրապետության նախագահի հումանիտար և արտերկրում բնակվող կիպրացիների հարցերով հանձնակատար Ֆոտիս Ֆոտիու:
- Հունաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Տերենս-Նիկոլաոս Քուիք:
- Եգիպտոսի ներգաղթի նախարար Նաբիլա Մաքրամ:
- Աթենքում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ֆադեյ Չարչօղլյան:
- Կիպրոսի հայազգի պատգամավոր Վարդգես Մահտեսյան:
- ՀԲԸՄ կենտրոնական վարչության անդամ Վազգեն Յակուբյան:

- Հանդիպում Կիպրոսի հայ համայնքի հետ:
- Հանդիպում Նարեկ հայկական վարժարանի սաների հետ:
- Հայ-ամերիկյան թանգարանի հորգաբարձուների խորհրդի անդամներ:
- Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդ Գ.Տ. Հովնան արք. Տերտերյանի և հոգևոր դասի հետ:
- Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդ Գ.Տ. Մուշեղ արք. Մարտիրոսյան և հոգևոր դաս:
- Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Գ.Տ. Օշական արք. Չոլոյան և հոգևոր դաս:
- Գլենդելի քաղաքապետ Զարեհ Սինանյան և քաղաքային խորհրդի անդամներ:
- Գլենդելի կրթական խորհրդի անդամներ:
- Մասաչուսեթսի նահանգային օրենսդիր մարմին անդամ Դավիթ Մուրադյան:
- Միդլսեքս քաղաքի շերիֆ Փիթեր Կուտուջյան:
- ՀՅԴ ԱՄՆ Արևմտյան շրջանային հանձնախմբի և կից ու քույր կառույցների ղեկավարներ և ներկայացուցիչներ:
- ՀՅԴ ԱՄՆ Արևելյան շրջանային հանձնախմբի և կից ու քույր կառույցների ղեկավարներ և ներկայացուցիչներ:
- ՌԱԿ ԱՄՆ Արևմտյան շրջանային հանձնախմբի և կից ու քույր կառույցների ղեկավարներ և ներկայացուցիչներ:
- ՌԱԿ ԱՄՆ Արևելյան շրջանային հանձնախմբի և կից ու քույր կառույցների ղեկավարներ և ներկայացուցիչներ:
- ՍԴՀԿ ԱՄՆ Արևմտյան շրջանային հանձնախմբի և կից ու քույր կառույցների ղեկավարներ և ներկայացուցիչներ:
- ՀԲԸՄ ԱՄՆ Արևմտյան շրջանային հանձնախմբի ղեկավարներ և ներկայացուցիչներ:
- ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյան:
- Հայաստան համահայկական հիմնադրամի ԱՄՆ Արևմտյան շրջանի ղեկավարներ և բարերարներ

- Ամերիկայի հայկական համագումարի ԱՄՆ Արևմտյան շրջանային հանձնախմբի ղեկավարներ և ներկայացուցիչներ:
- Լոս Անջելեսի հայ գործարարներ և բարերարներ:
- Լոս Անջելեսի հայ իրավաբանների միության ղեկավարներ և ներկայացուցիչներ:
- Իրանահայերի միության ղեկավարներ և ներկայացուցիչներ:
- Իրաքահայերի միության ղեկավարներ և ներկայացուցիչներ:
- Պոլսահայերի միության ղեկավարներ և ներկայացուցիչներ:
- Սիրիահայերի օգնության միության ղեկավարներ և ներկայացուցիչներ:
- Ամերիկայի հայ Ավետարանական ընկերակցության գործադիր տնօրեն Զավեն Խանջյանի հետ:
- Կարնեգի հիմնադրամի նախագահ Վարդան Գրեգորյանի հետ:
- Թավիթյան հիմնադրամի նախագահ Ասո Դավիդյանի հետ:
- Հայ կանանց միջազգային միության ղեկավարներ և ներկայացուցիչներ:
- Լոս Անջելեսի հայկական երիտասարդական կառույցների և ուսանողական միությունների ղեկավարներ և ներկայացուցիչներ:
- Ամերիկայի հայկական թանգարանի աշխատակազմի հետ:

Ելույթներ՝

- Հայաստան-Կիպրոս-Հունաստան եռակողմ հանդիպման ժամանակ:
- Հայաստան-Կիպրոս-Հունաստան եռակողմ հանդիպումից հետո՝ մամուլի ասուլիսի ժամանակ:
- Հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ:
- Լոս Անջելեսում հայ համայնքի հետ հանդպիման ժամանակ:
- Նյու Յորքում հայ համայնքի հետ հանդպիման ժամանակ:
- Բոստոնում հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ:
- Armenian Wounded Heroes Fund-ի հանդիպում-քննարկման ժամանակ:

- Լոս Անջելեսի հայկական երիտասարդական կառույցների և ուսանողական միությունների ղեկավարների և ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ:

Բարձրացված հարցեր՝

- Հայաստան-Կիպրոս բարեկամական հարաբերությունների ամրապնդում համատեղ իրականացվելիք ծրագրերի միջոցով:
- Հայաստան-Կիպրոս-Հունաստան բարեկամական հարաբերությունների ամրապնդում համատեղ իրականացվելիք ծրագրերի միջոցով:
- Հայաստան-Հունաստան-Կիպրոս-Եգիպտոս նոր քառակողմ հանդիպմանը Հայաստանի մասնակցության կարևորությունը:
- Հայաստանի և Կիպրոսի հանրապետությունների համատեղ իրականացվելիք ծրագրերում երիտասարդների հնարավորինս շատ ներգրավումը:
- Հայկական համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող կրթական հաստատությունների պահպանումն ու առաջխաղացումը:
- Հայկական կրթօջախներում դասագրքերի հարցը:
- Ուծացման դեպ պայքարի նոր մեխանիզմների մշակում և զարգացում:
- Կիպրոսի հայկական համայնքում եկեղեցու՝ որպես հայապահպան կառույցի դերի նշանակությունն ու դրա պահպանումը:
- Հայաստանում ներդրումային դաշտի բարելավման հարցը:
- Սփյուռքում բնակվող մինչև 27 տարեկանների ՀՀ-ում զինվորական ծառայության հարցը:
- Սփյուռքի հայեցի կրթության և հայապահպանության հարցը:
- Հայրենադարձության հարցը:

Հուլիսի 24, 2018թ.

Ժամանեցի Կիպրոս, Նիկոսիա

- Կեսօրին հանդիպեցի Կիպրոսի Հանրապետության նախագահի հումանիտար և արտերկրում բնակվող կիպրացիների հարցերով հանձնակատար Ֆոտիս Ֆոտիոի հետ: Անդրադարձանք ՀՀ-ում տեղի ունեցած թավշյա հեղափոխությանը, խոսեցինք Հայաստան-Կիպրոս բարեկամական հարաբերություններից, անդրադարձանք Կիպրոսի հայ համայնքին հուզող խնդիրներին, պայմանավորվածություն ձեռք բերեցինք գործակցել նաև տարբեր ծրագրերի շուրջ՝ դրանցում ներգրավելով որքան հնարավոր է շատ երիտասադների:
- Հեռախոսազրույց ունեցա Հունաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Տերենս-Նիկոլաոս Քուիքի հետ: Վերջինիս հայտնեցի ցավակցություններս՝ կապված Աթենքի հարակից տարածքներում բազմաթիվ մարդկային զոհերի պատճառ դարձած հրդեհների կապակցությամբ:
- Երեկոյան հրավիրված էի ճաշի, որին մասնակցում էր H.G. Bohdjelian& Sons LTD-ի տնօրեն Հագոփ Բոհջելյանը, Կիպրոսի նախագահի արտերկրյա և հումանիտար հարցերով հանձնակատար Ֆոտիու Ֆոտիսը կնոջ հետ:

Հուլիսի 25, 2018թ.

- Վաղ առավոտյան այցելեցի «Մակեդոնիտիսսա» ռազմական հուշահամալիր և ռազմական գերեզմանատուն, ծաղկեպսակ դրեցի՝ հարգանքի տուրք մատուցելով հունական և կիպրական զոհերի հիշատակին:
- Այցելեցի նաև ՀԲԸՄ Նիկոսիայի ակումբ և «Մելքոնյան» կրթական հաստատություն, որտեղ ՀԲԸՄ կենտրոնական վարչության անդամ Վազգեն Յակուբյանի ուղեկցությամբ շրջեցի հաստատության մասնաշենքերում, ծանոթացա հաստատության փակման պատճառներին ու այս հարցում ՀԲԸՄ դիրքորոշմանը:

- Հանդիպեցի ու լսեցի նաև վերոնշյալ կրթական հաստատությունն ավարտած մի քանի ներկայացուցիչների, ծանոթացա առկա մտահոգություններին, դիտարկումներին ու կարծիքներին:
- Այցելեցի ՄԱԿ խաղաղապահ զորքերի կողմից վերահսկվող բուֆերային գոտի, որը բաժանում է Կիպրոսը և Թուրքիայի կողմից գրավված տարածքները՝ կղզու հյուսիսային հատվածը:
- Օրվա ավարտին մասնակցեցի «Երիտասարդ կիպրացիների համաշխարհային համաժողովի» բացմանը: Այստեղ ծանոթացա Եգիպտոսի ներգաղթի նախարար Նաբիլա Մաքրամի հետ, որն Աս-Սիսիի կառավարության միակ ղպտի քրիստոնյա գործիչն է:

Հուլիսի 26, 2018թ.

- Հանդիպեցի Կիպրոսի Հանրապետության նախագահ Նիկոս Անաստասիադիսի հետ: Հանդիպմանը մասնակցում էին նաև Կիպրոսի Հանրապետության նախագահի հումանիտար և արտերկրում բնակվող կիպրացիների հարցերով հանձնակատար Ֆոտիս Ֆոտիուն, Հունաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Տերենս-Նիկոլաոս Քուիքը, Եգիպտոսի ներգաղթի նախարար Նաբիլա Մաքրամը: Նախագահը խոսեց Հայաստան-Կիպրոս-Հունաստան և Կիպրոս-Հունաստան-Եգիպտոս եռակողմ ձևաչափերի զարգացման և կարևորության մասին: Մասնակիցները նշեցին, որ Հայաստան-Հունաստան-Կիպրոս-Եգիպտոս նոր քառակողմ հանդիպումն էլ ավելի կնպաստի բարեկամ պետությունների միջև հարաբերությունների ամրապնդմանը:
- Մասնակցեցի ասուլիսի, որին ներկա էին նաև Կիպրոսի Հանրապետության նախագահի հումանիտար և արտերկրում բնակվող կիպրացիների հարցերով հանձնակատար Ֆոտիս Ֆոտիուն, Հունաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Տերենս-Նիկոլաոս Քուիքը: Ասուլիսի ժամանակ խոսեցինք

Հայաստան-Կիպրոս-Հունաստան բարեկամական հարաբերությունների մասին և ապագայում համատեղ իրականացվելիք ծրագրերից:

- Նիկոսիայում հանդիպեցի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Պատմեցի Հայաստանում տեղի ունեցող փոփոխությունների մասին, այնուհետև ներկայացրեցի սփյուռքի հետ աշխատանքների, Հայաստան-սփյուռք գործակցության շուրջ իմ և մեր թիմի պատկերացումներն ու մշակվող նոր ռազմավարությունը, որից հետո լսեցի նրանց. արձանագրեցինք համայնքում առկա խնդիրներն ու մտահոգությունները, ինչպես նաև համայնքի հաջողության պատմությունները, լսել եմ նաև Կիպրոսի մեր հայրենակիցների տարբեր առաջարկներ, խորհուրդներ:
- Օրվա ավարտին այցելեցի Նիկոսիայում գործող Նարեկ հայկական վարժարան: Այստեղ մեզ դիմավորեցին մի խումբ հայ պատանիներ, որոնք Արի Տուն ծրագրի անցումային փուլի մասնակիցներից էին:

Հուլիս 27, 2018թ.

- Կեսօրին մեկնեցի ԱՄՆ:

Հուլիսի 28, 2018թ.

- Կեսօրին ժամանեցի Լոս Անջելես:
- Երեկոյան հանդիպեցի Հայ-ամերիկայն թանգարանի հոգաբարձուների խորհրդի անդամների հետ, թանգարանի նախագահը ներկայացրեց թանգարանի նպատակը, շենքի նախագիծը, նախատեսված ցուցահանդեսների բովանդակությունը:

Հուլիսի 29

- Առավոտյան հանդիպեցի Իրաքահայերի միության ղեկավարների հետ: Հանդիպման ընթացքում ներկայացրեցի նախարարության ծրագրերը, ինչպես

նաև տեսլականը, միության ղեկավարության հետ քննարկեցինք համագործակցության հնարավորությունները:

- Հանդիպեցի Իրավաբանների միության ղեկավարների հետ, քննարկեցինք ոլորտի վերաբերյալ հարցեր, պայմանավորվածություն ձեռքբերեցինք համագործակցության վերաբերյալ:
- Հանդիպեցի Հայ բարեգործական ընդհանուր միության ղեկավարների հետ: Հանդիպման ընթացքում ներկայացրեցի նախարարության ծրագրերը, մասնավորապես՝ «Ներուժ» ծրագիրը, միության ղեկավարության հետ քննարկեցինք համագործակցության հնարավորությունները:
- Կեսօրին հյուրընկալվեցի Ֆերահյան ազգային վարժարանում, որտեղ հանդիպեցի Հայ հեղափոխական դաշնակցության և կից կառույցների ղեկավարների ու 70 ավելի ներկայացուցիչների հետ: Իմ խոսքում անդրադարձա թավշյա հեղափոխության հաղթանակին, կառավարության գործունեությանը, Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդմանը, Սփյուռքի նախարարության ծրագրերի շրջանակներում համագործակցությանը:
- Հանդիպեցի համայնքային երիտասարդական կազմակերպությունների և հայկական ուսանողական միությունների ղեկավարների և ներկայացուցիչների հետ: Իմ խոսքում կարևորեցի երիտասարդության դերը Հայաստանի-Սփյուռք գործակցության ու կապերի ամրապնդման հարցում: Անդրադարձա նաև հայապահպանության խնդիրն, նշեցի Սփյուռքում երիտասարդական կառույցների գործունեության անհրաժեշտության մասին: Ներկայացրեցի Սփյուռքի նախարարության «Ներուժ» ծրագիրը, մանրամասնեցի ծրագրով երիտասարդներին տրվող հնարավորթությունները:
- Հանդիպեցի Ռամկավար ազատական կուսակցության ղեկավարների հետ: Իմ խոսքում անդրադարձա թավշյա հեղափոխության հաղթանակին, կառավարության գործունեությանը, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը, Սփյուռքի նախարարության ծրագրերի շրջանակներում համագործակցությանը:

- Մասնակցեցի Իրանահայերի միությունում տեղի ունեցած ընդունելությանը, որին ներկա էին համայնքային կառույցների ու կազմակերպությունների բազմաթիվ ներկայացուցիչներ:

Հուլիս 30

- Գլենդելի քաղաքապետարանում հանդիպեցի քաղաքապետ Զարեհ Սինանյանի և քաղաքային խորհրդի հայազգի անդամների հետ: Քննարկեցինք Սփյուռքի նախարարության ծրագրերը, որոնք իրականացվում են հայրենադարձության ուղղությամբ, անդրադարձանք ամենահայաշատ քաղաքը համարվող Գլենդելի հայության խնդիրներին: Պայմանավորվեցինք համագործակցել:
- Ճաշեցի «Հայաստան» համահայկական հիմնադրամի ԱՄՆ Արևմտյան ափի աշխատակազմի և խոշոր բարերարների հետ, քննարկեցինք հիմնադրամի ապագա գործունեության վերաբերյալ հարցեր, պայմանավորվեցինք աշխատել համատեղ:
- Երեկոյան *Pacific Community Center*-ում տեղի ունեցավ հանդիպում հայ համայնքի ավելի քան 700 ներկայացուցիչների հետ: Ներկայացրեցի Սփյուռքի նախարարության գործունեությունը, ծրագրերը, ապագայի տեսլականը, ինչպես նաև պատասխանեցի բարձրաձայնված բազմաթիվ և բազմաբնույթ հարցերին:

Հուլիս 31

- Առավոտյան հանդիպեցի Գլենդելի կրթական խորհրդի հայազգի անդամների հետ: Քննարկեցինք հայապահպանությանը, ինչպես նաև ԱՄՆ-ի դպրոցներում հայոց լեզվի ուսուցման ծրագրերի վերաբերյալ հարցեր, ձեռք բերեցինք համագործակցության պայմանավորվածություններ:
- Հանդիպեցի Սիրիահայերի օգնության հիմնադրամի ղեկավարների հետ, ծանոթացա հիմնադրամի կողմից արդեն իսկ իրականացված ծրագրերին, ներկայացրեցի սիրիահայերի աջակցության ուղղությամբ Հայաստանի կառավարության և Սփյուռքի նախարարության կողմից իրականացված ծրագրերը:

- Ճաշեցի Ամերիկայի հայկական համագումարի խորհրդի անդամների հետ: Հանդիպման ընթացքում ներկայացրեցի նախարարության ծրագրերը, ինչպես նաև տեսլականը, միության ղեկավարության հետ քննարկեցինք համագործակցության հնարավորությունները:
- Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդարանում հանդիպեցի առաջնորդ Մուշեղ Սրբազանին, հոգևոր դասին և ծխական խորհրդի անդամներին: Սրբազան Հայրը ներկայացրեց թեմի կրթական գործունեությունը և այն ծրագրերը, որ իրականացնում են հայապահպանության ուղղությամբ: Իմ խոսքում ես անդրադարձա Սփյուռքի նախարարության կողմից հայապահպանության ուղղությամբ իրականացվող ծրագրերը, ինչպես նաև ներկայացրեցի այն ծրագրերը, որոնց շուրջ կան համագործակցության հնարավորություններ:
- Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդարանում հանդիպեցի թեմի առաջնորդ Հովնան Սրբազանին: Հանդիպման ընթացքում քննարկեցինք ԱՄՆ Արևմտյան ափի հայ համայնքում առկա խնդիրների լուծման ուղիների վերաբերիալ հարցեր, Սրբազան Հայրը ներկայացրեց թեմի հայապահպան գործունեությունը, նախանշեցինք համագործակցության ուղիները: Հովնան Սրբազանի հետ հանդիպումից հետո տեղի ունեցավ ընդունելություն, որին ներկա էին նաև Հայ Կաթողիկե և Հայ Ավետարանական եկեղեցիների, համայնքային կազմակերպությունների և թեմին կից գործող միությունների ներկայացուցիչներ:

Օգոստոս 1

- Հանդիպեցի Պոլսահայերի միության ղեկավարների հետ Հանդիպման ընթացքում ներկայացրեցի նախարարության ծրագրերը, ինչպես նաև տեսլականը, միության ղեկավարության հետ քննարկեցինք համագործակցության հնարավորությունները:

- Հանդիպեցի Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցության ղեկավարների հետ: Հանդիպման ընթացքում ներկայացրեցի նախարարության ծրագրերը, մասնավորապես՝ «Ներուժ» ծրագիրը, միության ղեկավարության հետ քննարկեցինք համագործակցության հնարավորությունները:
- Կեսօրին ավարտվեց այցս Լոս Անջելես և մեկնեցի Նյու Յորք:

Օգոստոսի 2

- Առավոտյան հանդիպեցի Ամերիկայի հայ ավետարանական ընկերակցության գործադիր տնօրեն Զավեն Խանջյանի հետ: Հանդիպման ընթացքում ներկայացրեցի Սփյուռքի նախարարության տեսլականը, ծրագրերը, քննարկեցինք նախարարության և Հայ Ավետարանական ընկերակցության համատեղ իրականացվեղ ծրագրերի շարունակականության վերաբերյալ հարցեր:
- Հանդիպեցի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Օշական արք. Չոլոյանի և հոգևոր դասի հետ: Հանդիպման ընթացքում քննարկեցինք ԱՄՆ Արևելյան ափի հայ համայնքում առկա խնդիրների լուծման ուղիների վերաբերհալ հարցեր, Սրբազան Հայրը ներկայացրեց թեմի հայապահպան գործունեությունը, նախանշեցինք համագործակցության ուղիները:
- Հանդիպեցի ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանի հետ, քննարկեցինք նախարարության և ՀԲԸՄ համատեղ իրականացվեղ ծրագրերը, պայմանավորվածություն ձեռք բերեցինք ծրագրերի շարունակականության վերաբերյալ:
- Նույն օրը Հանդիպում ունեցա նաև Կարնեգի հիմնադրամի նախագահ Վարդան Գրեգորյանի և «Թավիդյան» կրթական հիմնադրամի նախագահ Ասո Դավիդյանի հետ:
- Երեկոյան Թեքեյան մշակութային կենտրոնում տեղի ունեցավ հանդիպում հայ համայնքի ավելի քան 100 ներկայացուցիչների հետ: Ներկայացրեցի Սփյուռքի

նախարարության գործունեությունը, ծրագրերը, ապագայի տեսլականը, ինչպես նաև պատասխանեցի բարձրաձայնված բազմաթիվ և բազմաբնույթ հարցերին:

Օգոստոսի 3

- Առավոտյան հանդիպեցի Ռամկավար ազատական կուսակցության նախագահ Նորայր Մգրդչյանին և կուսակցության ներկայացուցիչներին: Իմ խոսքում անդրադարձա թավշյա հեղափոխության հաղթանակին, կառավարության գործունեությանը, Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդմանը, Սփյուռքի նախարարության ծրագրերի շրջանակներում համագործակցությանը:
- Կեսրին մասնակցեցի «Armenian Wounded Heroes Fund» կազմակերպության կողմից իրականացվող հանդիպում-քննարկմանը, որին ներկա էին համայնքի շուրջ 70 ներկայացուցիչներ: Իմ խոսքում կարևորեցի հիմնադրամի և նմանատիպ գործունեություն ծավալող հայկական կազմակերպությունների դերը, ինչպես նաև ի նպաստ այդ կառույցների՝ հայ համայնքների կողմից արվող հանգանակությունները:
- Հանդիպեցի Հայ օգնության միության, Հայ մարմնակրթական ընդհանուր միության, Համազգային հայ կրթական և մշակութային միության, Հայ երիտասարդաց դաշնակցության ղեկավարների և ներկայացուցիչների հետ: Իմ խոսքում անդրադարձա կառավարության գործունեությանը, Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդմանը, Սփյուռքի նախարարության ծրագրերի շրջանակներում համագործակցությանը:
- Երեկոյան մեկնեցի Բոստոն:

Օգոստոսի 4

- Հանդիպեցի Բոստոնի ժառանգության պուրակ հիմնադրամի նախագահ Ջեյմս Կալուստյանին, քննարկեցինք հայապահպանության ուղղությամբ նախարարության կողմից իրականացվող ծրագրերը: Հանդիպումից հետո Ջեյմս Կալուստյանի ուղեկցությամբ այցելեցի Բոստոնի Հայկական ժառանգության պուրակ:

- Հանդիպեցի Ռամկավար ազատական կուսակցության և Թեքեյան մշակութային միության ղեկավարների և ներկայացուցիչների,
- Այցելեցի Ամերիկայի հայկական թանգարան, շրջեցի թանհարանի ցուցասրահներիում, հանդիպում անձնակազմի հետ: շրջայցի ընթացքում աշխատակիցները ներկայացրեցի թանգարանի պատմությունը, հարուստ ցուցանմուշները, որոնք ներկայացնում են հայկական մշակույթը: Թանգարան այցի ընթացքում հանդիպեցի նաև Հայ կանանց միջազգային միության նախագահ Անի Խարաջյանին և միության անդամների հետ: Հանդիպումից հետ թանգարանի սրահում տեղի ունեցավ հարց-պատասխան հայ համայնքի 100-ից ավելի ներկայացուցիչների հետ: Ներկայացրեցի Սփյուռքի նախարարության գործունեությունը, ծրագրերը, ապագայի տեսլականը, ինչպես նաև պատասխանեցի բարձրաձայնված բազմաթիվ և բազմաբնույթ հարցերին:

Օգոստոսի 5

- Առավոտյան այցելեցի Ս. Ստեփանոս և Ս. Հակոբ եկեղեցիներ, Ս. Հակոբ եկեղեցում մասնակցեցի պատարագի: Պատարագից հետո հանդիպեցի Մասաչուսեթս նահանգի օրենսդիր մարմնի անդամ Դավիթ Մուրադյանի հետ: Քննարկեցինք համայնքային խնդիրների վերաբերյալ հարցեր, ներկայացրեցի նախարարության ծրագրերը, ապագայի տեսլականը:
- Երեկոյան հանդիպեցի Միդլսեքս քաղաքի շերիֆ Փիթեր Կուտուջյանին:

Օգոստոսի 6

- Ուոթերթաունի «Հայրենիք» կենտրոնում հանդիպեցի Հայ Դատի կենտրոնական կոմիտեի ղեկավար կազմի հետ, քննարկեցինք կոմիտեի կողմից իրականացվող ծրագրերը, մասնավորապես Հայոց ցեղասպանության և Արցախի Հանրապետության ճանաչման ուղղությամբ: Նախանշեցինք համագործակցության ուղիներն ու ծրագրերը:
- Երեկոյան վերադարձա Երևան:

8. **Գործուղվողը՝**

Մխիթար Հայրապետյան

9. **Ստորագրությունը, ամսաթիվը**

10. 08. 2018թ.